Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Գագիկ Գրիգորյան:

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ուկրաինա, քաղաք Կիև, 2017թ. նոյեմբերի 16-ից 17-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Ուկրաինայի ենթակառուցվածքների նախարարություն:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՍԾՏՀ անդամ-երկրների տրանսպորտի նախարարների հանդիպմանը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Ուկրաինայի նախագահության շրջանակներում 2017թ. նոյեմբերի 17-ին ք. Կիևում տեղի ունեցավ ՍԾՏՀ անդամ-երկրների տրանսպորտի նախարարների հանդիպումը՝ «ՍԾՏՀ տարածաշրջանում ենթակառուցվածքների զարգացում և համատեղ ծրագրերի արդյունավետ իրականացում» խորագրով, իսկ նոյեմբերի 16-ին՝ ՍԾՏՀ տրանսպորտի գծով աշխատանքային խմբի հանդիպումը:

Աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում քննարկվեց, փոփոխվեց և համաձայնեցվեց ՍԾՏՀ անդամ երկրների տրանսպորտի նախարարների հանդիպման զեկույցի նախագծի տեքստը, ընդունվեց նախարարական հանդիպման օրակարգի նախագիծը, ինչպես նաև կատարվեցին նախարարական հանդիպման համար մի շարք նախապատրաստական աշխատանքներ:

Նախարարական հանդիպմանը ամփոփվեց 2015թ. հուլիսի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար տրանսպորտի ոլորտում ՍԾՏՀ աշխատանքային խմբի գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ Ռումինիայի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունը:

Այնուհետև դիտարկվեց և ընդունվեց 2017թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2019թ.-ի հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածի համար Ռումինիայի կողմից ներկայացված տրանսպորտի ոլորտում ՍԾՏՀ աշխատանքային խմբի գործողությունների ծրագրի նախագիծը:

Նախարարական հանդիպմանը ողջույնի խոսքով հանդես եկան Ուկրաինայի ենթակառուցվածքների նախարար Վոլոդիմիր Օմելյանը և ՍԾՏՀ գլխավոր քարտուղար Միքայել Քրիստադեսը: Հատուկ ելույթով հանդես եկան Ռուսաստանի և Ուկրաինայի ներկայացուցիչները:

Նախարարական հանդիպմանը ելույթով հանդես եկավ նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանը: Իր ելույթում նախարարի առաջին տեղակալը ընդգծեց հանդիպման կարևորությունը տրանսպորտի ոլորտում անդամ-պետությունների միջև բազմակողմ տնտեսական համագործակցության և դրա հետագա ամրապնդման տեսանկյունից: Այնուհետև ներկայացվեցին տրանսպորտի ոլորտում Հայաստանում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերը և, նշվեց, որ Հայաստանը հետևողական կմնա դրանց, ինչպես նաև ՍԾՏՀ գործողությունների ծրագրի հետագա իրականացմանը: Ելույթում նշվեց նաև, որ Հայաստանը մեծ ուշադրություն է դարձնում տրանսպորտային օրենսդրությանը և դրա կիրառմանը, որը տարեցտարի ավելի է բարելավվում՝ ապահովելով ավելի հարմարավետ տրանսպորտային համակարգ:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ՍՏԾՀ մշտական քարտուղարության հետ ակտիվ համագործակցությամբ իրականացնել ՍՏԾՀ ընթացիկ ծրագրերը՝ 2018թ. մայիսին Լայպցիգում կայանալիք Միջազգային տրանսպորտային ֆորումին ընդառաջ:

Անդրադարձ կատարվեց նաև ՄԱԿ-ի համաձայնագրերի և կոնվենցիաների հետ կապված գործընթացների թվայնացմանը՝ ներառյալ ապրանքների միջազգային փոխադրման

պայմանագրի մասին կոնվենցիան (e-CMR) և ապրանքների միջազգային ավտոմոբիլային փոխադրման մասին կոնվենցիան (e-TIR):

Հանդիպման ավարտին պատվիրակության ղեկավարները ընդունեցին սույն նախարարական հանդիպման զեկույցը և այն ներկայացրեցին ՍԾՏՀ անդամ-պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի 37-րդ նստաշրջանի քննարկմանը:

- **ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Նախարարական հանդիպման արդյունքում ՍԾՏՀ անդամ-պետությունների պատվիրակության ղեկավարները ընդունեցին և հաստատեցին տրանսպորտի վերաբերյալ Կիևի նախարարական հանդիպման համատեղ հռչակագիրը՝ «ՍՏՀԿ-ի ենթակառուցվածքների զարգացում և համատեղ նախագծերի արդյունավետ իրականացում» թեմայով:

Սույն հռչակագրի ընդունումը շատ կարևոր ռազմավարական նշանակություն ունի ՍԾՏՀ տարածաշրջանում տրանսպորտային համակարգի տնտեսական նշանակության բարձացման, տրանսպորտային ենթակացուցվածքների զարգացման, տրանսպորտային փոխադրումների գործընթացի իրականացման և դյուրացման, Սևծովյան օղակաձև ավտոմայրուղու զարգացման և Ծովային մայրուղիների ծրագրերի իրականացման տեսանկյուններից:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գագիկ Գրիգորյան

23.11.2017թ.